ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԿԻՍՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ. ՄԱՐՈՒՔՅԱՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ՝ ՆԱԽԱԳԻԾԸ ԱԺ ՉԻ ՀԱՍՆԻ

11.10.2013 11:57

Կառավարությունը նոր նախաձեռնությամբ է հանդես եկել, որի թիրախում այս անգամ հայտնվել են փաստաբանները: Բանն այն է, որ փաստաբանության և պետական տուրքի մասին օրենքներում փոփոխություններ ու լրացումներ են կատարվել, որոնց համաձայն սահմանվել է փաստաբանների պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգ և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ արդարադատության նախարարությանը և բացի այդ, գրանցամատյանում մեկ տարի ժակետով հաշվառելու համար նախատեսվել է գանձել տարեկան պետական տուրք՝ 60.000 դրամ: Նախօրեին Փաստաբանների պալատի շուրջ 100 փաստաբաններ քննարկում էին կազմակերպել վիճահարույց նախագծերի վերաբերյալ, որտեղ բոլորը միանշանակ դեմ էին արտահայտվում և ասում էին, որ այդ նախաձեռնությունը վտանգում է իրենց անկախությանը: Նախագիծը դեռ քննարկման փուլում է և Ազգային ժողով կհասնի քննարկումներից ու կառավարության կողմից վերջնականապես հաստատվելուց հետո:

ԱԺ պատգամավոր, նախկին փաստաբան Էդմոն Մարուքյանը ևս կիսում է իր գործընկերների մտահոգությունը և խոստանում է այնպես անել, որ խորհրդարանում այն դիմադրության արժանանա:

-Դուք, որպես նախկին փաստաբան ի՞նչ կարծիքի եք այդ նախաձեռնության մասին, վտանգներ տեսնո՞ւմ եք:

-Գիտեք, իմ կարծիքը, որևէ կերպ չի տարբերվում իմ փաստաբան գործընկերների և Փաստաբանների պալատի պաշտոնական կարծիքից: Նախագիծն այնպիսին է, որ ամենաթույլ քննադատությանն անգամ չի դիմանում: Երեկ տեղի ունեցած ասուլիսի ժամանակ մանրամասն ներկայացվել են բոլոր փաստարկները և իմ գնահատականը նախաձեռնության վերաբերյալ միանշանակ է այն զուրկ է տրամաբանությունից և որևէ կերպ հիմնավորված չէ:

-Արդարադատության նախարարը փաստաբանների բողոքը պայմանավորել էր լրացուցիչ գումարների գանձմամբ և ասել էր, որ դա հարկ է ու պետք է դրանով բյուջե լցվի: Արդյոք դա հիմնավորո՞ւմ եք համարում:

-Տեսեք ներկայացված նախագծերով փորձ է արվում

իրավապաշտպան գործունեությամբ զբաղվողներից պետական տուրք գանձել, որը ոչ միայն անընդունելի է, այլ նաև սա արվում է այն դեպքում երբ փաստաբանները մեր երկրում չունեն հարկային որևէ արտոնություն և վճարում են բոլոր այն հարկատեսակները, որը վճարում է ցանկացած ձեռնարկատեր: Ավելին, ինձ հայտնի չէ որևէ մի զարգացած երկրի փորձ, որ նման արհեստական և անտրամաբանական ձևով փորձ արվի փաստաբաններից գումարներ գանձել: Բյուջեն լցնելու տեղեր շատ կան, բայց դրանք փաստաբանական գործունեությունից շատ հեռու են, եթե հետևում եք խորհրդարանի նիստերին, ապա բազմիցս նկատած կլինեք պատգամավորների առաջարկները և քննադատությունն ուղղված բյուջեն լցնելու տեղերը բաց թողնելուն, թող սկսեն այդ տեղերից, որոնք կրկնում եմ որևէ կապ չունեն փաստաբանական գործունեության հետ: Նախագծի հիմնավորումների բաժինը արդեն նշեցի, որ փաստարկված չէ և ես չեմ հիշում այսքան թույլ հիմնավորումներով կազմված նախագիծ, որ ներկայացված կլիներ արդարադատության նախարարության կողմից: Ինչու եմ սա ասում, որովհետև շատ լավ ճանաչում եմ թե ինչ բարձր կարգի մասնագետներ են աշխատում նախարարությունում և ուղղակի տարակուսանք է առաջացնում նման նախագծի ներկայացումը, որը արդարադատության նախարարության բարձր նշանակությունը մի քանի անգամ իջեցնում է:

-Իրականում ի՞նչ է փորձում անել կառավարությունը և ինչպե՞ս եք փորձելու դիմադրել այդ նախաձեռնությանը:

-Թե ինչ է փորձում անել կառավարությունը դա շատ պարզ է, որն արդեն նախարարը բացատրել է՝ ինչ որ մեկից ուզել լրացուցիչ գումար: Ուղղակի այս դեպքում այդ ինչ որ մեկի դերում փաստաբաններն են: Ինչ վերաբերում է նախաձեռնությանը դիմադրելուն, ապա ես հույս ունեմ, որ նախագիծը չի հասնելու Ազգային Ժողով: Վատագույն սցենարով ասեմ արդեն դիմադրությունը Պալատի կողմից միանշանակ առկա է, որին ես միացել եմ և իմ տեղում պատրաստ եմ իմ պատգամավոր գործընկերներին անկախ կուսակցական պատկանելությունից առանձին-առանձին հանդիպել ու ներկայացնել այն բոլոր վտանգները, որոնք այս նախագծում առկա են: Պետք է նշեմ, որ անգամ գործուղման մեջ լինելով արդեն խոսել եմ մի խումբ պատգամավորների հետ և նրանք կիսում են մեր մտահոգություններն ու պատրաստ են նախագծին դեմ արտահայտվելուն: Վստահ եմ, որ գործընկերներիս հետ միասին մեզ կհաջողվի հասնել

նրան, որ նախագծերը դրական եզրակացություն չստանան:

-Փաստաբաններն արդեն հայտարարել են, որ դիմելու են ծայրահեղ քայլի՝ կհայտարարեն գործադուլ: Արդյո՞ք դա ելք եք համարում:

-Հույս ունեմ, որ ծայրահեղ քայլերին չի հասնի, իսկ անհրաժեշտության դեպքում բողոքի օրենքով չարգելված բոլոր ձևերն էլ ընդունելի են:

Աղբյուրը՝ http://www.panorama.am/am/analytics/2013/10/11/maruqyan-about-bill

Նախորդ նորությունը: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ՄԻՋԱՄՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ. ՕՄԲՈՒԴՍՄԵՆ

Հաջորդ նորությունը: ԼՈՌՈՒ ՄԱՐՋԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ՝ ԸՆԴԴԵՄ «ՏՈՏԱԼԻՏԱՐ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

24.10.2013 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })